ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-17/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տպագրական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30.08.2017թ

ժամը 11:00

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ. Ավետիսյան

անդամներ՝ Մ. Գևորգյան

Է. Եսայան

քարտուղար՝ Ն. Նիկոլայան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

(Մ. Ավետիսյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Մ. Ավետիսյան)

Ընդունել ի գիտություն՝

- Հրավերով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից՝ ԱՁ «Արման Ասմանգուլյանից», պահանջվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները:
- Հրավերով սահմանված կարգով հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթերն պետական եկամուտների կոմիտե մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է կատարված նմանատիպ (տպագրական աշխատանքների) մեկ պայմանագիր, որի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ մասնակցի ներկայացրած

գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

ՀՀ կառավարությանն առընթերն պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը հրավերով սահմանված ժամկետում չի ստացվել: ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի համաձայն մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը գնահատել բավարար:
2. Ընտրված մասնակից ճանաչել ԱՁ Արման Ասմանգուլյանին:
3. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

3.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

(Մ. Ավետիսյան)

Ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիր կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին ք.Երևան, Թաիրովի 15, 311 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Մ. Ավետիսյան

Անդամներ՝ _____ Մ. Գևորգյան

_____ Է. Եսայան

Քարտուղար՝ _____ Ն. Նիկոլայան